

ՁՎԱՐԱՆՆԵՐԻ ՔԱՂՑԿԵՂԻ ԱՏՈՒԳԱԹԵՐԹ ԲՈՒԺԱՌՈՒՆԵՐ

Այս փաստաթուղթը կձառայի որպես գործիք, որը կօգնի Ձեզ իրականացնելու ձվարանների քաղցկեղի բուժումը Ձեր բժշկական թիմի հետ միասին: Դրա տարբեր բաժինները պարունակում են տեղեկատվություն, որը կարևոր է Ձեր բուժման համար և կետեր, որոնք Դուք պետք է քննարկեք և հետևեք Ձեր առողջապահական թիմի հետ Ձեր քաղցկեղի բուժման ճանապարհին:

<p>ԲԱԺԻՆ 1 ՅԻՄՆՈՎԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՔ ՔԱՂՑԿԵՂԻ ԸՆՏԱՆԵԿԱԼ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ</p>	<p>ԲԱԺԻՆ 2 ԼՐԱՅՐԵՔ ՁԵՐ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԲԺՇԿԻ ԿԱՄ ՄԱՆԿԱԲԱՐՁ-ԳԻՆԵԿՈԼՈԳԻ ՅԵՏ</p>	<p>ԲԱԺԻՆՆԵՐ 3, 4, 5 ԼՐԱՅՐԵՔ ՁԵՐ ԳԻՆԵԿՈԼՈԳ-ՈՒՌՈՒՅՔԱԲԱՆԻ ՅԵՏ</p>	<p>ԲԱԺԻՆ 6 ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԼՐԱՅՈՒՅԻՉ ՆՇՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԱՇՏ</p>
---	---	---	--

Խնդրում ենք կարդալ Քաղցկեղի Ազգային Համապարփակ Ցանց (National Comprehensive Cancer Network, NCCN) Եպիթելային ձվարանների քաղցկեղի ուղեցույցներ հիվանդների համար լրացուցիչ տեղեկատվության համար՝ <https://www.nccn.org/patients/guidelines/content/PDF/ovarian-patient.pdf>

ԲԱԺԻՆ 1. ԸՆՏԱՆԵԿԱԼ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Քաղցկեղի ընտանեկան պատմությունը կարևոր է: Խոսեք Ձեր ընտանիքի անդամների հետ և նշումներ կատարեք Ձեր ընտանիքի քաղցկեղի պատմության մասին: Ձեր բուժման ընթացքում Ձեզ կհարցնեն այդ մասին:

- Ո՞վ է ունեցել քաղցկեղ: (առաջին կամ երկրորդ աստիճանի ազգական)
- Ինչպիսի՞ք քաղցկեղ:
- Տարիքը քաղցկեղի ախտորոշման պահին:
- Արդյո՞ք նա/նրանք անցել է/են գենետիկ թեստավորում: Եթե Դուք անցել եք գենետիկ թեստավորում, ինդրում ենք կիսվել այդ արդյունքներով Ձեր առողջապահական ծառայությունների մատակարարների հետ (տ՛ես բաժին 4):

<p>1^{ԻՆ} 1^{ԻՆ} ԱՍՏԻՃԱՆԻ ԱՐՅՈՒՆԱԿԻՑՆԵՐ ՇՆՈՂՆԵՐ ՔՈՒՅՐԵՐ ԵՎ ԵՐԲԱՅՐՆԵՐ ԵՐԵՒԱՆԵՐ</p>	<p>2^{ՐԴ} 2^{ՐԴ} ԱՍՏԻՃԱԿԻ ԱՐՅՈՒՆԱԿԻՑՆԵՐ ՏԱՏԻԿՆԵՐ ԵՎ ՊԱՊԻԿՆԵՐ ԹՈՌՆԵՐ ՍՈՐԱՔՈՒՅՐՆԵՐ/ՀՈՐԵՐԲԱՅՐՆԵՐ ՉԱՐՄՈՒՅԻՆԵՐ/ՉԱՐՄԻԿՆԵՐ</p>
---	---

ԲԱԺԻՆ 2. ԱՇԽԱՏԱՆՔԸ ՁԵՐ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԲԺՇԿԻ (PRIMARY CARE PROVIDER, PCP) ԿԱՄ ՄԱՆԿԱԲԱՐՁ-ԳԻՆԵԿՈԼՈԳԻ (OBSTETRICIAN/GYNECOLOGIST, OB/GYN) ՅԵՏ

Մատակարարի անվանումը՝ _____ Յեռախոսահամար՝ _____

ԱՐՅԱԼ ԹԵՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ		
ԱՐՅԱԼ ԱՆԱԼԻԶԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ԱՐԴՅՈՒՆՔ	ԱՄՍԱԹԻՎ
CA-125-Ի ՑՈՒՑԱՆԻՇԸ՝		
CEA-Ի ՑՈՒՑԱՆԻՇԸ՝		
ԱՅԼ.		

Բերեք Ձեր ստացած թեստի բոլոր արդյունքների պատճենները:

ԹԵՍԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Դուք կատարելով եք որովայնի/կոնքի ՉԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ՇԵՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ (computed tomography, CT) սկանավորում: ԱՅՈ ՈՉ (սկանավորման ամսաթիվը՝ _____)

Եթե ԱՅՈ, ապա կիրառվում են հետևյալ 2 կետերը.


- Եթե ունեք ռենտգենոլոգի եզրակացության տպագիր տարբերակը Ձեր CT սկանավորման արդյունքների վերաբերյալ կամ CT սկանավորման պատճենը, բերեք այն գինեկոլոգ-ուռուցքաբանի հետ հանդիպմանը:
- Ձեր CT սկանավորման պատճենը էլեկտրոնային եղանակով կպահանջվի ուռուցքաբանի գրասենյակի կողմից, եթե այն բացակայում է

Եթե ՈՉ՝

- այցելություն նշանակեք գինեկոլոգ-ուռուցքաբանի հետ:

ԲԱԺԻՆ 3. ԱՇԽԱՏԱՆՔԸ ԶԵՐ ԳԻՆԵԿՈԼՈԳ-ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆԻ ՉԵՏ

Գինեկոլոգ-ուռուցքաբանի անունը՝ _____ Յեռախոսահամարը՝ _____

ՔԱՂՑԿԵՐԻ ՓՈՒԼԱՎՈՐՈՒՄԸ. ՔԱՂՑԿԵՐԻ ՏԵՍԱԿԸ _____	ՓՈՒԼ _____
<p>ՉԱՄԱՌՈՏ ԱՎՆԱՐԿ ՓՈՒԼԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ</p> <p>I. Քաղցկեղը տեղայնացված է միայն ձվարաններում կամ արգանդափողերում:</p> <p>II. Քաղցկեղը ազդում է 1 կամ երկու ձվարանների կամ արգանդափողերի վրա և տարածվել է կոնքի ստորին հատվածում, կամ այն որովայնամզային քաղցկեղ է:</p> <p>III. Քաղցկեղը ընդգրկում է 1 կամ երկու ձվարանները կամ արգանդափողերը, կամ այն որովայնամզային քաղցկեղ է: Այն տարածվել է կոնքից դուրս՝ որովայնամզային հատված և/կամ հետորովայնամզային հատվածի ավշահանգույցներ (հիմնական արյան անոթների երկայնքով ձգվող ավշային հանգույցներ, ինչպիսին է աորտան)՝ որովայնի հետևի հատվածում:</p> <p>IV. Քաղցկեղը տարածվել է որովայնի խոռոչից դուրս գտնվող օրգանների վրա:</p> <p>IV-A. Քաղցկեղը տարածվել է թոքերի շուրջ գտնվող հեղուկի վրա</p> <p>IV-B. Քաղցկեղը տարածվել է յարդի կամ որովայնի խոռոչից դուրս գտնվող օրգանների վրա, ներառյալ որովայնի խոռոչից դուրս գտնվող աճուկի ավշային հանգույցները</p>	<p>Այս պատկերը նախատեսված է Ձեր գինեկոլոգ-ուռուցքաբանի համար՝ հիվանդության տեղայնացումը նշելու համար:</p> 

Փուլավորման մասին բոլոր մանրամասները կարելի է գտնել Քաղցկեղի Ամերիկյան ընկերության (American Cancer Society) կայքում՝ <https://www.cancer.org/cancer/ovarian-cancer/detection-diagnosis-staging/staging.html>

ԲԱԺԻՆ 4. ԳԵՆԵՏԻԿ ԹԵՍԱՎՈՐՈՒՄ

Գինեկոլոգիական խորհրդատուի անունը՝ _____ Յեռախոսահամարը՝ _____

Արդյո՞ք իմ ձվարանների քաղցկեղն ունի գենետիկ բաղադրիչ: ԱՅՈ ՈՉ

Եթե կա գենետիկ բաղադրիչ, ապա որ գենն է մուտացիայի ենթարկվել: _____

Կա՞ն արդյոք լրացուցիչ քայլեր, որոնք ես պետք է ձեռնարկեմ հիմնվելով իմ գենետիկ թեստավորման արդյունքների վրա:

- Այո
 - տեղեկացրեք ընտանիքի անդամներին քաղցկեղի զարգացման գենետիկ ռիսկի մասին
 - մատակարարների հետ խորհրդակցեք քաղցկեղի զարգացման լրացուցիչ ռիսկի մասին
 - այլ _____
- ոչ

ԲԱԺԻՆ 5. ԲՈՒԺՈՒՄ

Ձեր գինեկոլոգ-ուռուցքաբանը կարող է առավել հանգամանալից բացատրել բուժման հաջորդականության և ռեժիմի մասին: Ուռուցքը նեղացնելու նպատակով վիրահատությունից առաջ կատարվող քիմիոթերապիան կոչվում է «նեոադյուվանտ քիմիոթերապիա» ("neoadjuvant chemotherapy"):

ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ԲՈՒԺՈՒՄ

Վիրահատություն՝ _____ Վիրահատության ամսաթիվը՝ _____

ՔԻՄԻՈԹԵՐԱՊԻԱ	ԱՐԴՅՈՒՆՔ	ԱՄՍԱԹԻՎ

ՎԻՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ

Վինիկական փորձարկումը գիտական ուսումնասիրություն է, որը ներառում է մարդկանց՝ քաղցկեղի բուժումը բարելավելու նոր ուղիներ գտնելու համար, ինչպիսիք են կանխարգելումը, ախտորոշումը, բուժումը և կողմնակի ազդեցությունների կառավարումը:

- Քաղցկեղի տարբեր տեսակների և փուլերի համար կիրառվում են որոշակի կլինիկական հետազոտություններ
- Վինիկական հետազոտությանը մասնակցելը միշտ կամավոր է
- Վինիկական հետազոտությունները երբեմն կարող են ընտրություն լինել նրանց համար, ովքեր անցել են բազմաթիվ բուժգործողությունների միջով

Արդյո՞ք իմ մատակարարը խոսել է կլինիկական փորձարկումների մասին: ԱՅՈ ՈՉ

Ես մասնակցո՞ւմ եմ կլինիկական փորձարկման: ԱՅՈ ՈՉ



ԲԱԺԻՆ 6. ՆՇՈՒՄՆԵՐ

Օգտագործեք այս էջը ցանկացած լրացուցիչ նշումների համար, որոնք Դուք կամ Ձեր բժիշկները կարող եք ունենալ:

